ՄԵՂԱԴՐԱ՞ՆՔ, ԹԷ՞ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Յուլիսի 14ին ՀՀՇ վարչութիւնը գումարել էր ընդլայնուած նիստ, հրաւիրելով նաեւ լրագրողների, ինչը պէտք է հաւանաբար բացատրել նրանով, որ ՀՀՇ վարչութիւնը կազմակերպութեան ներսում տիրող իրական վիճակը այլեւս թաքցնել չկարողանալով, ներքին պառակտման խորացումը, ինչպէս եւ այլեւայլ մեկնաբանումները կանխելու ցանկութեամբ նպատակայարմար է գտել հանդէս գալու հրապարակայնութեան նախաձեռնութեամբ։

Ներկայացնում ենք վարչութեան նախագահ Վ. Սիրադեղեանի նիստում ունեցած ելոյթը կրճատումներով։

«Նախ ինչ է տեղի ունեցել նախորդ նիստից յետոյ: Քաղաքի առեւտրական ցանցը արդէն երեք շաբաթ է, կարելի է ասել, չի աշխատում: ԲԽՍՍի մարմինները համապարփակ ստուգումներ են անցկացնում միայն քաղաքի այն ցանցում, որը գլխաւորում են Ալբերտ Բաղդասարեանը եւ Մերգելեանի ՀՀՇից Արմէն Յարութիւնեանը՝ առեւտրի վարչութեան պետը: Հիմա իրաւապահ մարմինները զբաղուած են այդ ցանցով: Միւս աւազակորջերին ձեռք չեն տալիս: Ես դա համարում եմ քաղաքական ակցիա, որը երկու ուղղուածութիւն ունի՝ ՀՀՇն վարկաբեկել ժողովրդի աչքում եւ ջախջախել, երկրորդը՝ այն հին կլանները(...) ստիպել են օրգաններին կամ գործարքի մէջ են մտել կառավարութեան հետ եւ խփում են այդ նոր սաղմնաւորուող նախաձեռնութեանը: Մի կողմից տնտեսական-կլանային, միւս կողմից, որ աւելի կարեւոր է, քաղաքական:

Ալբերտ Բաղդասարեանը հանդէս եկաւ յայտարարութեամբ, որ ինքը դուրս է գալիս վարչութեան կազմից, դուրս կը գայ նաեւ Գերագոյն Խորհրդից(...)։

Միւս վարչութեան նիստում Աւետիք Իշխանեանը յայտարարեց, որ ինքը դուրս է գալիս վարչութեան կազմից, որովհետեւ իշխանութեան պայքար է գնում եւ ինքը չի ուզում մասնակցել դրան: Այդ նոյն նիստում Դաւիթ Վարդանեանը, որը մշտական հրաւիրուած էր, ասաց, որ ինքը այլեւս չի մասնակցի վարչութեան նիստերին: Այդ ընթացքում տեղի է ունեցել վարչապետի ելոյթը հեռուստատեսութեամբ, որտեղ նա եւս մի անգամ հրաժարուել է ՀՀՇից: Տեղի է ունեցել վարչապետի հանդիպումը կոմերիտմիութեան կենտկոմում, որտեղ նրանց խոստացել էր իր հովանաւորութիւնը շէնքը վերադարձնելու գործում: Կոմերիտականներն ասել են, որ Գերագոյն Խորհրդի վրայ իրենք յոյս էին կապել, այսուհետեւ վարչապետի թիկունքին կանգնած կը լինեն:

Յիշո՞ւմ էք, համագումարում ես չկարդացի իմ զեկուցման երկրորդ մասը, որը վերաբերում էր ներքին քաղաքականութեանը, հանրապետութեան իրավիճակին: Կարելի է ասել, որ ես սխալ արեցի, բայց նաեւ համագումարն էր գուցէ սխալ, որը չպահանջեց, որ ես դա կարդամ: Բայց կարծում եմ, մենք բոլորս միտք ունենք, որ խուսափենք առճակատումից: Այն բոլորը, ինչ ասեցի իմ նախորդ ելոյթում եւ այսօր, երեւում է փաստաթղթում, այդ բոլորը Օգոստոսի վերջից, Սեպտեմբերի սկզբից է սկսուել եւ դա յայտնի էր բոլորին: (Յետոյ) Ստեղծուեց վարչութեան, կամ «Ղարաբաղ» կոմիտէի մի տարբերակ, 5 հոգուց բաղկացած՝ Վազգէն Մանուկեանը, Լեւոն Տէր Պետրոսեանը, Դաւիթ Վարդանեանը, ես, Աշոտ Մանուչարեանը, որոնք պիտի կոորդինացնէին ինչ-ինչ բնագաւառների գործունէութիւնը: Դա չաշխատեց, որովհետեւ վարչապետը չուզեց աշխատել: Դա քայքայուեց: Յետոյ 2 ամիս կամ ամիսուկէս առաջ ստեղծուեց, վարչութեան զայրոյթից, անելանելի վիճակից ծնուեց այդ ատեանը: Եւս մի մարմին, կուսակցական մարմին, որը դարձեալ պիտի կոորդինացներ: Այդ մարմինը ընտրուեց փակ, գաղտնի քուէարկութեամբ:

Վարչապետը նիստերից մէկի ժամանակ յայտարարեց, որ ինքը ոչ սահմանադրական մարմնի որոշումներ չի կատարի եւ մենք որոշեցինք ստեղծել սահմանադրական մարմին՝ Գերագոյն Խորհրդի նոր նախագահութիւն, որին ինչ-որ լիազօրութիւններ տալ եւ որոշեցինք, որ այդ մարմինը կանցնի միայն այն դէպքում, երբ Վազգէն Մանուկեանն ու Լեւոն Տէր Պետրոսեանը կը պաշտպանեն դրա անհրաժեշտութիւնը պառլամենտում: Վարչապետը ոչ միայն չը-պաշտպանեց, այլեւ դէմ հանդէս եկաւ: Այսինքն էդ մարմինն էլ չաշխատեց: Միւս բոլոր քանքերը(...) անցան ապարդիւն: Ես նոյնիսկ իջայ այն աստիճանի, որ կանանց ծաղիկներ էի առնում, սուրճ էի խմում հետները, քծնում էի: Քաղաքական գործչին, կազմակերպութեան ղեկավարին ոչ վայել բան, բայց դա էլ չանցաւ: Եւ ես ուզում եմ, որ այնուամենայնիւ վերջին պատրանքը ցրուի եւ մենք դառնանք քաղաքական կազմակերպութիւն: Ոչ թէ թերութիւնների, թերացումների մասին է խօսքը՝ այստեղ պարզ իշխանութեան հարց է: Գնում է իշխանութեան համար կատաղի պայքար:

Այսօր Գերագոյն Խորհուրդը իշխանութիւն չունի, բնականաբար ՀՀՇն նոյնպէս չունի: Իշխանութեան հարցում բարոյական կատեգորիաները եւ հոգեբանական նիւանսները ոչ մի դեր չեն խաղում: Մենք շատ երկար յոյս դրեցինք, յենուեցինք «Ղարաբաղ» կոմիտէի լուսապսակի վրայ, որը ժողովուրդն ընդունում էր: «Ղարաբաղ» կոմիտէի անունը պէտք չէր գցել, պէտք չէր այդ լուսապսակը իջեցնել, բայց պէտք է խոստովանել, որ վարչութիւնն էլ չունեցաւ այդ տղամարդկութիւնը, այդ ըզգաստութիւնը եւ խորհուրդն էլ հաւանաբար գուցէ արդէն ուղիղ մի մեղքով, որ յայտարարէր, որ «Ղարաբաղ» կոմիտէ գոյութիւն չունի արդէն Սեպտեմբեր ամսից: Եւ վարչութիւնն էլ իր վրայ չվերցրեց Հայոց Համազգային Շարժման իշխանութիւնը: Փաստօրէն գոյութիւն չունէր «Ղարաբաղ» կոմիտէ, վարչութիւնը, որը հիմնականում համաձայնւում էր «Ղարաբաղ» կոմիտէի հետ, մնաց քաղաքականութիւնից դուրս: Եւ իրօք, մենք ժողովրդի ցանկութիւններին, երազանքներին կուլ գնալով, երկար ժամանակ թաքցնում էինք, որ գոյութիւն չունի «Ղարաբաղ» կոմիտէ, որ «Ղարաբաղ» կոմիտէում միասնականութիւն չկայ եւ ամեն անհատ իր համար քաղաքականութիւն է վարում: Թաքցրեցինք՝ դա փոքրոգութիւն էր, դա քաղաքական անհեռատեսութիւն էր ՀՀՇի կողմից եւ վարչութեան կողմից, եթէ կոպիտ չասեմ: Եւ հիմա մենք փաստի առաջ ենք կանգնած:

Ասեմ նաեւ, մեր գրանցման մասին ձեր որոշումը ես չկարողացայ կատարել: Արդէն բոլոր կուսակցութիւնները գրանցուել են, կարծեմ այսօր, կամ վաղը գրանցում է կոմկուսը:

Արդարադատութեան նախարար Վահէ Ստեփանեանը չի գրանցում Հայոց Համազգային Շարժումը: Ես իմ անձնական ձեւերը կարող եմ ունենալ ստիպել գրանցել, բայց այնուամենայիւ սա խորհրդի որոշելու հարց է: Որովհետեւ եթէ Դաշնակցական կուսակցութիւնը ընդհատակեայ համագումար է անում եւ դրանով գրանցում է, Արդարադատութեան նախարարութիւնը ոչ մի պատճառ չունի Հայոց Համազգային Շարժումը չգրանցելու: Այսքանը: